

## **ՀԱՅ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՌԱԻԵՆՆԱՅԻ ԲՐՈՒՋԼ ՔԱՆԴԱԿԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԻԵՆԱԼԵՆԵՐԻՆ**


Հայ-իտալական մշակութային կապերի բեղմնաւոր ասպարէցում յատուկ ուսումնասիրութեան է արժանի 70-ական թուականներից սկիզբ առնող հայ քանդակագործների մասնակցութիւնը իտալիայի Ռաւեննա քաղաքում գտնուող Դանթէական կենտրոնի կողմից կազմակերպուող Բրոնզէ Քանդակի Միջազգային Բիենալէներին։ Երկու տասնամեակից աւել շարունակուող նրանց արդիւնաւէտ մասնակցութիւնը այս շատ հեղինակաւոր միջոցառմանը այնքան նկատելի եւ նշանակալից էր, որ 1998 թուականին հայ քանդակագործներին չնորհուեց խմբային մրցանակ բազմաթիւ Բիենալէներում ցուցաբերած բարձր որակի եւ պրոֆեսիոնալիզմի համար։

Պարբերական մամուլում բազմիցս խօսուել է Ռաւեննայի Միջազգային Բիենալէներին հայ քանդակագործների բեղուն եւ արդիւնաւէտ մասնակցութեան մասին։ Սակայն Բիենալէներին մասնակցած հայ քանդակագործների ստեղծագործութեան այդ էջի վերաբերեալ շատ կարեւոր է կատարել մասնագիտական ուսումնասիրութիւն՝ որոշելու համար թէ՛ նրանց կատարած ներդրումը այդ միջոցառման մէջ, թէ՛ Բիենալէների ազգեցութիւնը հայ քանդակագործների արուեստի վրայ, ինչպէս նաև հայ-իտալական մշակութային կապերի այս ասպարէզի տեղն եւ նշանակութիւնը մեր արուեստի պատմութեան մէջ։

Բնականաբար, ժամանակակից հայկական քանդակագործութիւնը ինքնին արդէն շատ հետաքրքիր եւ ուսումնասիրութեան արժանի երեւոյթ է, սակայն Բիենալէների մի քանի հայ մասնակիցներին ենք պարտական ոչ միայն մեր արուեստին այս ասպարէզում լայն միջազգային ճանաչում բերելու, այլեւ դրա զարգացմանը որոշակի ուղղուածութիւն տալու համար։

Կարծում ենք, որ խմբային յաջողութեան համար էլ ի վերջոյ պարտական ենք առանձին քանդակագործների նուաճումներին, ուս-

տի, այս յօդուածի սահնաններում չանդրադառնալով Բիենալէների բոլոր մասնակիցներին, ինչը պահանջում է անհամեմատ աւելի մեծ ծաւալ, ցանկանում ենք հրաւիրել ընթերցողի ուշադրութիւնը այն քանդակագործների ստեղծագործութեան վրայ, որոնք կարողացան, բարձր մակարդակով ներկայացնելով հայ քանդակագործութիւնը միջազգային հանրութեանը, նաեւ եռանդ եւ նոր ուղղուածութիւնն հաղորդեցին իրենց հայ յետնորդներին:



«Դանք» և Վերգիլիոսը դրախտի մուտքի առջեւ»  
Լեւոն Թոքմաջեան

**Առաջինը** հայ քանդակագործներից, որ մասնակից դարձաւ Ռաւեննայի Բիենալէներից ե-ին, Լեւոն Թոքմաջեանն էր, որը 1979 թուին ներկայացրեց այնտեղ իր «Դանքին եւ Վերգիլիոսը դրախտի մուտքի առջեւ» աշխատանքը, որի յօրինուածքը յստակ է, իսկ կատարումը՝ զուսպ, կարծես, հատիչի մի քանի հարուածներով ստացուած, եւ դրանով իսկ տպաւորիչ: Այդ աշխատանքը աննկատ չմնաց՝ Թոքմաջեանը արժանացաւ Ռաւեննա քաղաքի Պըքֆեկտուրայի Ոսկէ մեղալի: Հետագայում նա մաս-

նակցեց 1981, 1985 և 1990 թուականների Բիենալէներին՝ այդ տարիների մրցութային թեմաներին համապատասխան աշխատանքներ ներկայացնելով:

Սովետական համակարգի պայմաններում ցանկացած միջազգային միջոցառումներին մասնակցելու ունչը իր շատ դրական եւ խիստ բացասական կողմերը: Կենարոնն էր, որ որոշում էր այս կամ այն արուեստագիտի մասնակցութեան նպատակայարմարութիւնը, սակայն ընտրեալն արդէն ազատուած էր լինում բոլոր կողմնակի հոգսերից. պետութիւնն՝ այդ հօր հովանաւորը, իր վրայ էր վերցնում գործի թէ՝ կազմակերպչական, թէ՝ ֆինանսական, թէ որեւէ այլ բնոյթի խնդիրների լուծումը:

Այլ էր արդէն իրավիճակը անկախ Հայաստանի պայմաններում: Հայ քանդակագործներն ազատ էին միջազգային մրցոյթներին եւ ցուցահանդէսներին մասնակցելու իրենց ցանկութիւնը բաւարարելու մէջ, սակայն նրանք միանդամայն ազատ էին եւ ֆինանսաւորման աղբիւրներ որոնելու, գեղարուեստական արժէք ներկայացնող ստեղծագործութիւնները տարբեր երկրների սահմաններով անցկացնելու, եւ այլ՝ անսպասելի ծագող դժուարին խնդիրների լուծման գործում: Այդ նոր իրավիճակում՝ 1990-ական թուականներին, Ռաւեննայի ցուցահանդիս-մրցոյթին մասնակցելու իրենց ցանկութիւնն առաջին իրականացնողների թուին պատկանում էին Գարեգին Դաւթեանը, Սամուէլ Ղազարեանը եւ Աշոտ Բաղդասարեանը, որոնց մասնակցութիւնն արդիւնաւէտ եղաւ՝ Ոսկէ մեդալներով եւ մրցանակներով նշանաւորուած: 1990 թուականի Բիենալին մասնակցեցին նաև էջուարդ Շախիկեանը, Շաւարչ Խաչատրեանը, Արամ Արեւիկեանը եւ ուրիշները: 1994 թուականի ԺԱ. Բիենալէից սկսած մասնակիցների թիւը գնալով աւելանում է. Գետիկ Բաղդասարեան, Արմենակ Վարդանեան, Գագիկ Ղազարեան, Թում Գէորգեան, Մարիամ Յակոբեան, Նունէ Թումանեան, Լեւոն Վարդանեան, Էմին Պետրոսեան, Միքայէլ Օհանջանեան եւ ուրիշներ:

Ռաւեննայի Միջազգային Բիենալէները հրատիրուում էին 1973 թուից սկսուած՝ երկու տարին մէկ, եւ դրանց խորագրերը տարբեր էին. «Դանթէին նուիրուած մեդալ», «Դանթէի անձը եւ գործը», «Դրախտի դարպասը», եւ այն: Բոլոր այս Դանթէին վերաբերող թեմաները առնչւում են, բնական է, Աստուածաշնչեան թեմաների հետ, այսինքն այն ուրոտի, որը, բազում դարերի ընթացքում հօրագոյն ոգեշնչման աղբիւր հանդիսանալով համաշխարհային արուեստի համար, բաւական հեռու էր մեր երկրում ստեղծագործուղ հէնց այն սերնդի արուեստագիտներից, որին եւ վիճա-

կուած էր իր ծանրակշիռ ներդրումով մէկ անգամ եւս հաստատել հայկական ժամանակակից արուեստի դերն ու նշանակութիւնը: Ռաւեննայի Բիենալէների եւս մէկ կարեւորութիւնը մեզ համար կայանում է նրանում, որ հաղորդակցուելով Աստուածաշնչեան թեմաներին Բիենալէների շրջանակներում, հայ քանդակագործները, կարծես, նոր աշխարհ բացայատեցին իրենց համար:

Ի հարկէ, թեմայի նոր լինելը չի նշանակում, որ մինչ այդ հայ քանդակագործները չէին մտորում կամ չէին փորձում իրենց խօսքն ասել եւ այս ասպարհում: Այդ տեսակէտից դժուար է դերագնահատել այն նկարիչների փնտրումները, որոնք դեռ մինչեւ նոր ժամանակների գալիքը փորձում էին վերգտնել կորցրած հոգեւոր գաղափարները եւ մշտնջենական արժէքները, դիտարկելով դրանք իրենց ժամանակի շրջանակներում: Այդպիսի արուեստագիտների թուին է պատկանում քանդակագործ Սամուէլ Ղազարեանը, որն իր հակուածութիւնն ու մօտեցումը այդ թեմային ցոյց էր տուել դեռևս 1980-ական թուականներին, իսկ Ռաւեննայի Բիենալէներում նա դարձաւ մրցանակակիր երից: 1992-ին՝ Ռաւեննայի Փ. Բիենալէում Սամուէլ Ղազարեանի «Աստուածամայր» կամ «Լոյմ» աշխատանքն արժանացաւ Քրիստոնեայ-դեմոկրատական կուսակցութեան Յատուկ Մրցանակի: «Դրախտ» խորագրի տակ անցնող այդ տարուայ Բիենալէի հիմնական պահանջն էր քանդակում արտայատել Դանթէի լոյսի գաղափարը, ելնելով նրա ստեղծագործութեան որեւէ տողերից: Սամուէլ Ղազարեանն ընտրեց «Դրախտի» 33-րդ երգի տողերը, որոնք եւ գրուած են քանդակի պատուանդանի վրայ. «Դու գթութիւն, ողորմութիւն ես համակ...»: Այս բրոնզէ քանդակը, իր արտայայտամիջոցներով չափազանց զուսպ եւ լակոնիկ, առաջին հայեցքից գրեթէ երկրաչափական է թուում: Երեխան գրկին Աստուածամօր Փիգուրան դիմացից խաչի ուրուագիծ ունի, ինչը գաղափարական իմաստ կրելուց բացի այն ժամանակի համար նոր յօրինուածքային լուծումներից էր: Խաչը այստեղ հանդէս է գալիս իր նշանի ամբողջ բարդութեամբ, եւ զուցէ այս դէպքում առաջնայինը ոչ միայն չարչարանքների միջով փրկութեան հասնելու քրիստոնէական գաղափարն է, այլև դեռևս հեթանոսական ժամանակներից եկող եւ քրիստոնէութեան կողմից ընդունուած յաւիտենական սիրոյ գաղափարը: Եթէ մտովի միացնենք խաչի եղրակէտերը, կը ստացուի շեղանկիւն, որի անկիւնները՝ արմունկները, եւ առաջ եկած ծունկը յենակէտեր են հանդիսանում ամբողջ քանդակի համար: Կողքից մօր գլուխը եւ ծունկը,


մօր սրտից դուրս ելնող երեխայի գլխի հետ միասին, կորագիծ են կազմում, որն, անցնելով մարմնի միջով, կարծես, միսրճւում է նրանց ծնած հողի մէջ: Այսպէս, թւում է, թէ աննկատ, ստեղծւում է յստակ եւ կուռ տեկտոնիկ համակարգ: Երեխայի գլուխը, կարծես, մօր սրտից է դուրս գալիս՝ միաժամանակ ընկալուելով որպէս լոյսի աղբիւր կամ վառուող արեւ, ինչը միանգամայն արդարացուած է, քանի որ շրջանակ-անիւը արեւի խորհրդանիշ է հնագոյն ժամանակներից:



«Աստուածամայր» կամ «Լոյս»  
Սամուել Ղազարեան

Այս քանդակը լակոնիկ է, ինչը ինքնին մեծ արժանիք է, քանի որ դրականութեանը վերաբերող ասացուածքը հակիրճութեան մասին աւելի մեծ չափով կարող է քանդակին վերաբերել: Եթէ առաջինի դէպքում որոշ աւելորդ բառեր երբեմն դեռ ներելի են նկարագրուող պատկերը աւելի արտայայտիչ դարձնելու համար, ապա երկրորդում աւելորդութիւններն իսկոյն խախտում

Են քանդակի կամ հաւասարակոռածութիւնը, կամ մասշտաբը,  
կամ ձեւը, եւ այլն:



«Դժոխվի դարպասը»  
Վամուշի Ղազարեան


Ռաւեննայի 1994 թուականի ԺԱ. Միջազգային Բիենալէում Սամուչէ Ղազարեանը ներկայացրեց «Դժոխվի դարպասը» քանդակը, որը Ոսկէ մեղալ եւ իտալիայի Դանթէական ասոցիացիայի մրցանակ շահեց: Այս քանդակը յագեցած է խորհրդանշերով եւ այլաբանութիւններով. մարդկային արատներից կառուցուած «բարելոնեան» աշտարակի գագաթին տեղադրուած սեւ շըրջանակի մէջ Հիւցիֆերն է: Նա ներկայացուած է կրկնակի դէմքով.

մէկը՝ մարդկայինը, յոյսով գէպի վեր ուղղուած, միւսը, կենդանա-  
կերպը՝ գէպի ցած: Երկու գէմք ունի նա, սակայն միայն մէկ թեւ,  
որով թռչելն անհնար է: Մեւ շրջանակը Բարձրագոյն Օրէնքի սահ-  
մանափակող ուժի խորհրդանիշն է: Լիւցիփերի կրծքում տեղա-  
դրուած հայելին արտացոլում է երկրային կեանքում գոյութիւն  
ունեցող «դժոխքը» եւ մարդուն՝ իր հոգու խորքում իր իսկ կող-  
մից ստեղծուած դժոխքով: Քանդակի պատուանդանի՝ վերոյիշեալ  
բրդածեւ աշտարակի բրոնզէ մակերեսի մէջ զրոշմուած են մեծալ-  
ներ եւ դրամներ՝ որպէս մարդկային քաղաքակրթութեան եւ մարդ-  
կային թուլութիւնների նշաններ ու խորհրդանիշներ:

Այս քանդակը միայն դանթէական կամ Աստուածաշնչեան թեմայով կատարուած աշխատանք չէ. այն նաեւ փորձ է ներթափանցել մարդկային, այդ թւում սեփական հոգու խորբերը, ի մի բերել ապրածը, մտորել անցած եւ սպասուելիք ճանապարհների մասին:

ի դէպ, քանդակագործը մի առիթով ասել է, որ «տիեզերքի եւ քանդակի արարման ուղին նոյն է՝ Քառսից Հարմոնիա»: Ու՞մ չնորհիւ է անցնում քանդակագործը այդ ուղին, ո՞վ է վարում նրա հատիչը: Դանթէական թեմաները միանգամայն համապատասխան եւ համահունչ են քանդակագործի մտորումներին: Այստեղ աւելորդ չի յիշել բանաստեղծ իսուիֆ Բրոդսկու խօսքերն այն մասին, որ սկզբնական հարմոնիայի վերականգնումը արուեստի միջոցով մէկն է դրա իմաստի մեկնաբանութեան 2 տարբերակներից: Միւսը նա բնորոշում է որպէս արուեստագէտի ինքնարտայայտման ձեւ: Այսինքն եթէ առաջին դէպքում դա օբյեկտիւ գործողութիւն է, որը պէտք է գնահատուի այլ անձի (տուեալ դէպքում՝ Աստծոյ) կողմից, ապա երկրորդում՝ հեղինակի էութիւնից բխող սուբյեկտիւ ակտ: Սակայն գոյութիւն ունի նաեւ երրորդ տարբերակը՝ ստեղծագործութեան հեղինակը ոչ միայն վերականգնում է Տիեզերքին յատուկ հարմոնիան, այլեւ արձանագրում քառուր, որը ոչ պակաս բնորոշ է այդ նոյն Տիեզերքին: Եւ յայտնի չէ, թէ ինչն է աւելի բարդ, կամ ինչն է աւելի անկեղծութիւն պահանջում: Շատ կարեւոր է նաեւ քառսի եւ հարմոնիայի այն տոկոսային յարաբերութիւնը, որն օգտագործում է արուեստագէտի կողմից Տիեզերքի վերարտադրման իր տարբերակը ստեղծելիս: Գուցէ Ս. Ղազարեանի այս, ինչպէս նաեւ «Քառաւութեան ուղին» աշխատանքում (ներկայացուած շինելով Բիենալէներին, վերջինը նոյնպէս միանգամայն համահունչ է դանթէական թեմաներին) փորձ է կատարուած լուծելու հարմոնիայի եւ քառսի յարաբերական այդ կապը եթէ ոչ ամբողջ Տիեզ-


գերքի, ապա նրա չնշին եւ ամենակարեւոր մասնիկը կազմող մարդու սահմաններում:



«Քաւութեան ուղին»  
Սամուել Ղազարեան

Այստեղ հարկ է նաև յիշել, որ Տիեզերքի ճշգրիտ պատկերումը հին աշխարհում համարում էր մեղք, քանի որ դրանով խախտում էր մարդու եւ Աստծոյ Փունկցիաների բաշխումը՝ մարդը իր վրայ էր վերցնում Աստուածային Փունկցիան: Ուրեմն, ստեղծագործողը պէտք է իրեն տրուած սահմաններում կատարի իր Փունկցիան, հոգեւոր մակարդակի վրայ ինֆորմացիա հաղորդելով տիեզերականի եւ աշխարհիկի իր պատկերացումների մասին՝ իւրաքանչիւրին թոյլ տալով իւրովի ընկալել այն:

1998 թուականի ԺԴ. Միջազգային Բիենալէի «Դրախտի դարպասը» խորագրի շրջանակներում Սամուել Ղազարեանն անդրադարձաւ քրիստոնէութեան գաղափարախօսութեան համար մեծ նըշանակութիւն ունեցող Աւետման թեմային:



«Աւետում»  
Սամուել Ղազարեան

«Աւետում» կամ «Ave, Maria, gratia plena!» աշխատանքի յօրինուածքի հիմքում երեք խաչ է դրուած՝ ամբողջ քանդակախմբի հիմնայատակը հանդիսացող Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարի քառաբասիդ յատակածի խաչը, երկու կողմից գէպի տաճարը տանող մողական աստիճաններով եւ արձանների պատուանդաններով ստեղծուած խաչը եւ Գաբրիէլ Հրեշտակապետի ու Սուրբ Մարիամի Փիգուրաների միջեւ առաջացած տարածական խաչը: Վերջին խաչի միջոցով քանդակագործը, կարծես, ներգըրաւում է տարածութիւնը քանդակի մէջ, ծաւալային խաղի մասնակից է դարձնում այն: Հէնց այդ տարածութիւնն է, որ ձգում, կանչում է բոլորին՝ նա է գէպի դրախտ տանող ուղին: Սակայն այդ ուղին անցնելու համար պէտք է անցնել եկեղեցու՝ տաճարի միջով, որի յատակ ծաւալը, քանդակագործի կողմից հետագայ տարիների յաւելուածներից «ազատուած» եւ մեծ Միքելանջելոյի մտայդացմանը առաւելագոյնս մօտեցուած, իր ոսկեփայլ գմբէթով շողշողում է Սուրբ Մարիամի եւ Գաբրիէլ Հրեշտակապետի

Փիգուրաների միջեւ, Փրկութեան խաչի ստորոտում: Այս դէպքում, եթէ փոխակերպենք հանրայայտ արտայայտութիւնը, ճանապարհը ոչ թէ դէպի տաճար է տանում, այլ տաճարի միջով՝ դէպի յաւիտենական երջանկութիւն:

**Ս.** Ղազարեանի աշխատանքը ուշագրաւ է գուցէ նոյնիսկ իր՝ քանդակագործի կողմից չգիտակցուած դասական ոգու առկայութեամբ: Անտիկ շրջանի եւ Վերածննդի արուեստների «Հունչը» այս աշխատանքում լրիւ արդարացուած է, եւ ոչ միայն այն պատճառով, որ Վերածնունդն անտիկ շրջանի արուեստով է ոգեշընչուել, այլեւ այն, որ Աւետումն այստեղ դիտուած է Դանթէի ստեղծագործութեան անկեան տակ: Անտիկ շրջանի խստաշունչ եւ վեհ արուեստը վերակենդանացուել է աւելի ազատ եւ կրքու միջնադարում, եւ մենք զգում ենք դա քանդակախմբի ոգում՝ մտածուած, նոյնիսկ յստակ հաշուարկուած յօրինուածքի եւ նրա միջից բխող էներգիայի եւ էմոցիոնալ լարման միջոցով:

**Ս.** Ղազարեանի այս աշխատանքը Ռաւեննայի ժԳ. Բիենալէում շահեց ֆրանցիսկեան միաբանութեան Գլխաւոր մինիստրի Ոսկէ մեդալը:

Գարեգին Դաւթեանը արժանացել է Դանթէական կենտրոնի երկու բարձր մրցանակների. 1990 թուականին «Ընչաքաղցութեան մեղքը» աշխատանքի համար՝ Յովկաննէս Պողոս Բ. Հռոմի պապի մեծ Ոսկէ մեդալի, եւ 1994-ին՝ «Դժոխքի դարպասը» աշխատանքի համար՝ բարձրագոյն Ա. մրցամանի: 1994 թուականից Գ. Դաւթեանը Ռաւեննայի Միջազգային Բիենալէների մրցութային յանձնաժողովի անդամ է Հայաստանի կողմից:


Գ. Դաւթեանը այն հայ քանդակագործներից է, որն ունի իր յստակ եւ վառ արտայայտուած նախասիրութիւններն այդ բարդ արուեստում թէ՝ նիւթի, թէ՝ ձեւի առումով: Նա հակուած է իր ստեղծագործութիւններում օգտագործել այնպիսի լայն հնարաւորութիւններ ընձեռնող նիւթ, որպիսին բրոնզն է: Քանդակագործների խոստովանութեամբ, ամենաչնչին իսկ տատանումներն արտայայտող բրոնզէ մակերեսով կարելի է դատել հեղինակի հոգու վիճակի կամ տրամադրութեան, եւ նոյնիսկ բնաւորութեան մասին: Ինչպէս նկատում է ինքը՝ քանդակագործը, քաղաքակրթութեան ակունքներին այդքան մօտ կանգնած բրոնզն, արտացոլելով շրջապատող աշխարհն իր գոյներով, լոյս ու ստուերով, նաեւ գունաւորութեան պատրանք է ստեղծում քանդակում: Եւ, իսկապէս,

**Գ. Դաւթեանի քանդակները, պատինայի չնորհիւ տեղ-տեղ կանացաւուն կամ երկնագոյն, փայլուն յղկուած թէ անմշակ մակերեսով, գունաւոր են թւում:**

Փոքր չափեր, կամերային լուծում ունեցող այս քանդակները ստատիկ չեն՝ նրանց մէջ շարժում, դինամիկա կայ, որի տըպաւորութիւնը ստեղծուում է քանդակի որոշակի ուղղուածութեամբ, Փիգուրաների դէպի առաջ մղուածութեամբ, մարմինների եւ գլուխների միջեւ գոյութիւն ունեցող մտածուած անհամաշափութեամբ, ինչպէս նաեւ վերջաւորութիւնների՝ ձեռքերի ու ոտքերի, սրածայրութեամբ: Ի դէպ, Գ. Դաւթեանի գրեթէ բոլոր՝ թէ՛ դանթէական, թէ՛ այլ թեմաներով ստեղծուած աշխատանքներն իրենց մէջ կրում են ոչ միայն Փիգիկական, այլեւ հոգու որոշակի անհաշտութիւն, հեգնական մօտեցում շրջապատող միջավայրին, որն ամեննելին առճակատում չէ, այլ, աւելի շուտ, մըտածող մարդու հոգում տիրող մշտական կասկածանքի եւ իրարամերժ՝ հակասական զգացմունքների պայքար: Նրա մարդկային Փիգուրաներն անդէմ են, գլուխների տեղը փոքր գնդերով, եւ այդ ընդհանրական մօտեցումը դարձնում է նրանց, կարծես, ե՛ւ “միայնակութեան խորհրդանիշ”, ե՛ւ հոգու գործող մարմնաւորում:

Գ. Դաւթեանի աշխատանքները կարող են բաժանուել տարբեր պատկերաշարքերի, որոնցից մէկը ունի դանթէական ուղղուածութիւն: Առաջին հերթին դա 1994 թուին Ա. մրցամանի արժանացած «Դժոխքի դարպասը» աշխատանքն է, որն իրենից ներկայացնում է երկշերտ քանդակային բազմաֆիգուր մի պանո: Առաջին շերտը միջանցիկ անկանոն անցքերով եւ կամարակապ վերջաւորութեամբ դարպաս է, որի ներքեւի մասում տեղադրուած է դուրը: Սակայն դունով չի սահմանափակում մուտքի անջատումը արտաքին միջավայրից: Բուն բացուածքը փակ է քանդակազարդ քառակուսիների բաժանուած բրոնզէ մակերեսով: Ներքեւի երկրաշափական շերտը գեղարուեստական դիսոնանսի մէջ է մտնում անհարժ, կտրտուած մակերեսի հետ: Դանթէական կերպարներն արտայայտող եւ կարծես իրար միջից դուրս եկող պատկերներն անաւարտ ուլիեֆ են յիշեցնում, կոնտրաստի մէջ մտնելով տակի դասական դարպասների կերպարներով ներշնչուած շերտի հետ: Թւում է, թէ հոսուն, տարերային մի նիւթից մեր աչքի առաջ ծնւում, ծագում են պլաստիկ ձեւերը, որոնց մակերեսից դուրս եկող եւ ընկղմուած մանրամասները չեն խախտում յօրինուածքի ընդհանուր միասնականութիւնը, իսկ ստեղ-

**ծուած լուսա-ստուերային «խաղը» ծաւալայնութիւն է հաղորդում  
աշխատանքին:**



«Դժովի դարպասը»  
Գարեգին Դաւթեան

**Հնդհանուր լարումը լուծում է ստանում ամբողջ յօրինուածքը ամփոփող, «հաւաքող» հրեշտակի ֆիգուրայի միջոցով, որը կատարուած է, կարծես, շարժման մէջ։ Նրա թեթեւ, թռիչքի պատրաստ ծաւալը թաքնուած հակադրութիւն է թւում Ռոդէնի**

նոյն թեմայով կատարուած նշանաւոր դարպասը պսակող հզօր, էպիկական կերպարների հետ:



«Ընչախաղցուքեան մնηմը»  
Գարեգին Դավեան

Գ. Դաւթեանի 1990 թուականին Հռոմի պապի մեծ Ոսկէ մեղալը շահած «Ընչաքաղցութեան մեղքը» աշխատանքի խորհրդանըշային համակարգը պարզ է եւ համոզիչ. Դանթէն, նրան ուղեկցող «Երկրային բանականութեան խորհրդանիշ» Վերդիլիուսը եւ ընչաքաղցութեան մեղքը մարմնաւորող գայլը կանգնած են կարծես թէ հոսող մի հարթութեան վրայ, որն ընդհանրացուած արտայատութիւնն է Դանթէի երեւակայութեամբ ստեղծուած միջավայրի: Իրական ձեւի այդպիսի գիտակցուած դեֆորմացիան, կարծես, պլաստիկ լեզուով ժամանակի եւ տարածութեան կանոններից դուրս մի աշխարհի տեսիլք է ստեղծում, որը յիշեցում է հանդիսանում մարդկային արատների եւ կրքերի յաւիտենականութեան մասին: Ինչպէս Ս. Դալիի քաղաքացիական պատերազմի սարսափների հետ կապուած յօրինուածքների հոսող, փափուկ ժամացոյցները, այն սարսուռ եւ անհանգստութիւնն է առաջնում դիտողի մօտ:


Աշոտ Բաղդասարեանը վերոյիշեալ Բիենալէների մրցանակակիրների թուրին է պատկանել կրկնակի անգամ՝ 1992 և 1996 թուականներին։ 1992-ին նա շահել է Սան Ֆրանչեսկոյ միաբանութեան Ոսկէ մեդալը իր «Սուրբ մայրութիւն» քանդակի համար, իսկ 1996-ին արժանացել է Հռոմի պապի մրցանակին՝ «Մաքրագործումը» քանդակի համար։



«Սուրբ մայրութիւն»  
Աշոտ Բաղդասարեան

«Սուրբ մայրութիւն» քանդակը, որը ներկայացուել է որպես յիշատակուած լոյսի գաղափարի մարմնաւորում, երեխան ձեռքին Աստուածամօր պատկերն է՝ բարձր պատուանդանի վրայ տեղադրուած։ Քանդակի ոգեշնչման աղբիւրն են հանդիսանում «Դըրախտի» 24-րդ երգի տողերը։ «Այդպէս, այն լոյս հոգիները...»։ Պատուանդանը բաղկացած է մարդկանց Հոգիների՝ «լոյսերի», բազմութիւնից, որոնք, սպիրալաձեւ բարձրանալով, իրենց ձեռքերի, ուսերի վրայ են պահում Աստուածամօր Փիգուրան։ Նա դուրս է գալիս մարդկանց միջից, կարծես ծովի ալիքից։ Տեղ-տեղ մարդկանց Փիգուրաների տեսք ունեցող Հոգիները առանձին ծաւալով անջատւում են ընդհանուր բազմութիւնից կազմուած պատուանդանից, դրանով շարժում, դինամիկա հաղորդելով քանդակին։

Աշխատանքի ընդհանուր չափերը մեծ չեն, սակայն այն իր յօրինուածքով եւ համաչափութիւններով մոնումենտալ լինելու է ձգտում, եւ այդ պատճառով գոյութիւն ունեցող չափերի մէջ մեծ քանդակի մանրակերտի տպաւորութիւն է ստեղծւում:



«Մաքրագործում»  
Աշոտ Բաղդասարեան

«Մաքրագործում» քանդակախմբում մեղանչած մարդկանց հոգիների բազմութիւնը կանգնած՝ սպասում է Քաւարան մտնելու ամէն մէկն իր հերթին: Հետաքրքիր է լուծուած Քաւարանի դարպասը՝ քանդուած կամարի տեսքով: Քանդուած կամարը ինքնին մեծ ինֆորմացիա է կրում, եւ միաժամանակ այն իր տեսքով շատ հարազատ է հայ քանդակագործին, որի դարերի եւ արհաւիրքների միջով անցած երկրում դրանք սովորական երեւոյթ են: Սակայն կանգուն կամարը կրող տարր է, ապահովութիւն, նաև կարող է խորհրդանշ ծառայել այն ծիածանի, որը ծագեց Նոյի առջեւ հէնց մեր հողում՝ որպէս Աստծոյ կողմից ուղարկուած Հաշտութեան նշան: Քանդակագործի մտայդացումը յիշեցնում է ժողովրդական այն հաւատքը, թէ ծիածանի տակով անցնելը հիմնովին վերափոխում է մարդուն: Այդպէս էլ Քաւարանի դարպասի այս ծիածան-կամարի տակով անցնելիս, հոգին անցնում է, հաւանաբար, իր փոխակերպման եւ մաքրագործման ճա-


նապարհի ինչոր կարեւոր մի փուլ։ Քաւարանի դարպասն անցած Փիգուրաները տարբերում են միւսներից իրենց մշակման եղանակով, ինչը տպաւորութիւն է ստեղծում նրանց վրայ իջած փայլի եւ լոյսի։

1996 թուի Ռաւենայի ԺԲ. Բիենալէին հայ քանդակագործ Արմենակ Վարդանեանը կիսեց Առաջին մրցանակը ուռւմինացի քանդակագործի հետ իր «Քաւութեան դարպասը» աշխատանքի համար։ Այս հարթային լուծում ունեցող քանդակում, որը կարելի է համարեա ուղիեվ անուանել, Քաւութեան աստիճանն անցնող հոգին կարծես թռիչքի մէջ է պատկերուած։ Խաչուած մարդու նրա ուրուագիծն արտայայտում է տառապանքների միջով փրկութեանը հասնելու գաղափարը, իսկ գլխավերեւի բացուածքը դէպի վեր տանող լոյսի ճառագայթ է յիշեցնում։ Պատկերի ներքեւի մասում դրոշմուած մեղալները եւ դրամները, կարծես, յիշեցում լինեն Ս. Ղազարեանի «Դժոխքի դարպասը» 1994 թուականի աշխատանքի նոյնատիպ պատուանդանի մասին։ Գուցէ, Ա. Վարդանեանը կրկնել է իր գործընկերոջ կողմից ստեղծուած դժոխքը խորհրդանշող այս յօրինուածքը, դրա միջոցով ցոյց տալու համար, թէ ինչպէս հոգին, մաքրագործուելով, անջատում է այդ ծանր «բեռից» եւ թռչում դէպի լոյսը։

Գետիկ Բաղդասարեանը ներկայացել է Բիենալէներին երկու աշխատանքներով՝ «Դրախտի դարպասը» (կամ «Դրախտ») եւ «Դանթէն քաւարանում»։

«Դրախտի դարպասը» քանդակը պատուանդանի վրայ դըրուած խաչաձեւ յօրինուածք ունի։ Թւում է, թէ այն ամբողջապէս կազմուած է խորհրդանիշերից՝ արդէն ինքը խաչը չարչարանքի, քաւութեան եւ փրկութեան խորհրդանիշ է։ Կրկնուող աստիճանաձեւ տարրը աստիճանաձեւ բուրգ՝ զիքքուրատ է յիշեցնում, այսինքն, կապւում է մեմորիալ ճարտարապետութեան՝ հոգու հանդերձեալ յաւիտենական կեանքի հետ, եւ միաժամանակ շատ հետաքրքիր օրնամենտալ տեսք է հաղորդում քանդակի ճակատային տեսակէտին։ Խաչի լայնական թեւերում տեղադրուած են սիմետրիկ դասաւորուած երկու մարդկային Փիգուրաներ։ Քարերից հաւաքուած այս Փիգուրաները մաքուր լուծուած իրենց պարզութեամբ յիշեցնում են Կիկլագեան կղզիների քանդակները, որոնց կապակցութեամբ արուեստագէտներից

մէկը սրամիտ գրել է, թէ դրանք պարզապէս մարդու սեւագիր են, նրա պարզունակ սխեման, իերոգլիֆ կամ մանկական նկար: Այդ պարզութիւնը գալիս է բնութեան հետ կապից եւ վկայում է մարդկային սերունդների ժառանգականութեան եւ աշխարհում տիրող կրքերի յաւիտենականութեան մասին:



«Դրախտի դարպասը»  
Գետիկ Բաղդասարեան

Ֆիգուրաների այս զոյգը անջատում է Խաչի վերեւում տեղաւորուած Դրախտի դարպասի բացուածքը ներքեւում տեղ գտած Դժոխիքի դրան բացուածքից: Հեռուից դրանց ուրուագիծը նաւակի է նման: Գուցէ դա Քարոնի նաւակն է, որը բերել հասցրել է Հոգիներին Դրախտի դրանը, թէ՝ յիշեցում է Նոյեան տապանի մասին: Կենտրոնում իրար միացած այս ծաւալները, չետելով ամբողջ քանդակի յատակ հաւասարակշռուածութիւնը, միաժամանակ թեւատարած արծիւ եւ լոթոսի բացուած ծաղիկ են յիշեցնում, ինչը շատ հետաքրքիր մտորումների է բերում: Որոշ արեւելեան մշակոյթներում լոթոսի ծաղիկը խորհրդանշում է ար-

գատագրում երկրային կեանքի ունայնութիւնից, գերագոյն մաքրութիւն, հարմոնիա: Այն դէպի Աստուած տանող դժուարին ճանապարհի գագաթնակիցի մարմնաւորումն է՝ չէ՞ որ լոթուը սկսում է աճել ջրայտակի ցեխի մէջ, յետոյ, անցնելով ջրի միջով, մաքրում, կատարելագործում է, եւ ջրի մակերեւոյթին դուրս գալով, նոր է լիակատար բացում: Աւելորդ է ասելու, թէ ինչքան տեղին է այստեղ այդ խորհրդանիշը: Թեւատարած արծուի ուրուագիծը կրկնում է եւ «դատարկ», միջանցիկ մասում, այսպիսով եւ տարածութիւնը դարձնելով քանդակի բաղկացիչ տարր:


Դժոխքի եւ դրախտի դարպասների բացուածքներն էլ ունեն իրենց կտրուածքները՝ եթէ Դրախտ կարելի է մտնել հրեշտակածեւ բացուածքից, ապա Դժոխքի բացուածքում գլխիվայր կախուած Փիգուրը զարհուրանք է առաջացնում, յիշեցնելով մեղքերի քաւութեան համար դռան յետեւում սպասուող տառապանքների մասին: Այստեղ եւ աւելի յստակ կապ կարելի է տեսնել. մաքրագործուելուց յետոյ մեղանչած մարդու հոգին համբարձում է հրեշտակի կերպարով:

«Դանթէն քաւարանում» քանդակում պատկերուած է ինքը՝ Դանթէն, իր իսկ երեւակայութեամբ ստեղծուած «քաղաքում»՝ Քաւարանում, ուր նա մի փոքր դէպի առաջ եկած, ձեռքերը տարածած դիրքով կանգնած է դիտողի դերում: Դանթէն այստեղ հանդէս է գալիս որպէս «Աստուածային կատակերգութեան» գործող անձ, որի ներկայութիւնը եւ վերաբերմունքը կատարուելիքին ընթերցողը մշտապէս զգում է:

Գ. Բաղդասարեանի քանդակում Դանթէի հագուստը քուրձ է յիշեցնում, եւ մտածել է տալիս, թէ բանաստեղծն էլ այդ պահին իր մեղքերի քաւութեանն է ձգտում: Քուրձի այդ պատրանքը ստեղծում է Գ. Բաղդասարեանի քանդակներում յաճախ օգտագործուող մետաղի զօդման եղանակի չնորհիւ, ինչը յատուկ տըպաւորիչ է այս դէպում:

Ուաւեննայի Բիենալէների մասնակիցների երիտասարդ սերընդդի արդիւնաւէտ ներկայացուցիչներից է Միքայէլ Օհանջանեանը, որը 1998 թուականի ԺԳ. Բիենալէում արժանացաւ Յ-րդ մրցանակի «Խոյ համաստեղութեան օրհնութիւնը» իր աշխատանքի համար: Աշխատանքն իրենից ներկայացնում է բուրդ, որի նիստերի մշակումը գագաթից իջնող ճառագայթներ եւ տիեզերքի

պատկերներ են յիշեցնում: Նիստերից մէկից դուրս եկող ծաւալի վրայ փորագրուած են Դանթէի տողերը: Յայտնի հիպոթէզն այն մասին, որ բուրգն իր մէջ կրում է կողաւորուած ինֆորմացիա ինչպէս տիեզերքի, այնպէս էլ մարդու եւ նրա հոգեւոր կարողութիւնների մասին, միանգամայն համապատասխան է Դանթէի ստեղծագործեանը՝ իր թաքնուած իմաստին եւ բազմաթիւ առեղծուածներով, եւ այդ տեսակէտից երկրաչափական այս մարմինը տեղին է օգտագործուած երիտասարդ քանդակործի կողմից:



«Խոյ համաստեղութեան օրինութիւնը»  
Միքայէլ Օհանջանեան

2003 թուականին Ռաւեննայում տեղի ունեցած Բիենալէին Հայաստանից մասնակցում էին հայ քանդակագործների նոր սերընդից երկուսը, որոնցից մէկը՝ Վահէ Շախբագեանը, արժանացաւ Առաջին մրցանակի, եւս մէկ անգամ վկայելով իրենց յետնորդներին եռանդ եւ նոր ուղղուածութիւն հաղորդած նախորդ մասնակիցների կարեւոր դերի մասին:

Դանթէական Բիենալէներին 1990-ական թուականներին ակտիւօրէն մասնակցելու հայ քանդակագործների ձգտումը, կարծում ենք, կարելի է բացատրել մի քանի գործօններով: Դա եւ միջազգային հանրութեանը ներկայանալու նոր ստեղծուած հնարաւորութիւնն էր, եւ քանդակի արուեստում դարաւոր աւանդոյթների ու հոգեւոր արժէքների վերգտման ցանկութիւնը, ինչպէս նաև, գուցէ, դանթէական թեմաների հարպարների հա-

մապատասխանութիւնը մեր ազգային մտածողութեանը։ Սակայն, կարծում ենք, գոյութիւն ունի եւս մէկ պատճառ. յայտնի է, որ Դանթէն իր անմահ ստեղծագործութիւնը գրել է երկու պատմական ժամանակաշրջանների սահմանագծին, արտացոլելով նրա մէջ իր ժամանակակից կեանքի տարբեր երեւոյթներն ու դժուարութիւնները։ Ինչպէս գրել է Ֆ. Էնգելսը. «Ձեռողալական միջնադարի վերջը եւ ժամանակակից կապիտալիստական դարաշրջանի սկիզբը նշանաւորուած են հսկայական մի անձով։ Դա իտալացի Դանթէն է, միջնադարի վերջին եւ նոր ժամանակաշրջանի առաջին պոետը»։ Հնարաւոր է, որ հայ արուեստագէտներին, որոնք 1990-ականներին նոյնպէս յայտնուեցին հասարակական մեծ փոփոխութիւնների բովում, մարդկութեան բազմադարեան զարգացման Դանթէի կողմից կատարուած հանճարեղ ամփոփումն այդ պատճառով եւս հոգեհարազատ դարձաւ։

Այնպիսով, խօսելով համաշխարհային ժամանակակից արուեստի պատմութեան մէջ հայ քանդակագործութեան զբաղեցրած հաստատուն տեղի եւ նշանակութեան, ինչպէս նաև նրանց կողմից արուեստում հոգեւոր արժէքների եւ չափանիշների վերգտման մասին, կարող ենք համարձակ նշել այն կարեւոր դերը, որ ունեցաւ հայ քանդակագործների երկարատեւ ու արդիւնաւէտ մասնակցութիւնը Ռաւեննայի Բրոնզէ Քանդակի Միջազգային Բիենալէներին։

## The participation of Armenian sculptors in International Biennale symposium on a bronze sculpture in Ravenna

ANOUSH TER-MINASYAN

(summary)

In the field of rich and multilateral Italian-Armenian cultural relations the special attention can be turned on participation of the Armenian sculptors in International Biennale on a bronze sculpture in Ravenna, organized by Center of Dante. Proceeding more than two decades their productive participation in this authoritative action was so significant and appreciable, that in 1998 the Armenian sculptors was awarded by the Group Premium for a high level and the professionalism shown on many Biennales.

The first Armenian sculptors who have taken part in Ravenna's Biennale in 1979, was Levon Tokmajyan, and his work has received the Gold medal of Prefecture of the city of Ravenna. Since 90-s' years the amount of participants from Armenia has increased: among others participants were Garegin Davtyan, Samvel Kazarian anh Ashot Bagdasaryan, who received the supreme awards and Gold Medals. From 1994 year the amount of participants increased: Gezik Bagdasaryan, Armenak Vardanyan, Gagik Ghazaryan, Tom Gevorkyan, Mariam Hakobyan, Nune Tumanyan, Levon Vardanyan, Emin Petrosyan, Mikael Ohandjanyan and others.

In last Biennale in Ravenna two sculptors were accepted from Armenia, one of which – Vahe Shakhbazyan, has received the First Premium that testifies to a role, which have played the previous participants, who give a new orientation to creativity of their successors.

International Biennales on a sculpture in Ravenna had huge value for the Armenian sculptors not only because have brought the international recognition to modern Armenian art and in this arca, but also because it helped them to find again the lost spiritual values. This page of their creativity will be entered in a history of the modern Armenian art.